01/10.1/7476-11
2011-05-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն «բացօթյա առևտուր» է համարվում առևտրի օբյեկտներից և առևտրի իրականացման վայրերից դուրս՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրված ապրանքների առևտուրը:

Առևտրի օբյեկտների և առևտրի իրականացման վայրերի տեսակները, բնութագրիչներն ու դրանց ներկայացվող պահանջներն ամրագրված են «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 3-րդ, 3.1-ին, 4-րդ և 5-րդ հոդվածներում:

Ըստ այդմ էլ «առևտրի օբյեկտների տեսակներն են՝ խանութները, կրպակները, տաղավարները, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերը»: «Առևտրի օբյեկտներում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքատեսակների՝ առանձին բաժիններում»:

Համաձայն օրենքի առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) և ցուցահանդես–վաճառքի անցկացման վայրերը: Իսկ գյուղատնտեսական արտադրանքի շուկան բնութագրվում է որպես «առևտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է կենդանական ծագում ունեցող մթերքի, բույսերի, բուսական արտադրանքի, գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի առուվաճառք»:

Օրենքի 3.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Գյուղատնտեսական արտադրանքի շուկաների կազմակերպումը ենթակա է լիցենզավորման: Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության բնակավայրերի սահմանագծից դուրս բացառապես շարժական բաց վաճառատեղերի (վաճառասեղանների) միջոցով առևտրի իրականացման վայրի կազմակերպման դեպքերի վրա»:

Միաժամանակ 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն անհատ ձեռնարկատեր չհանդիսացվող ֆիզիկական անձանց թույլատրվում է առուվաճառք իրականացնել միայն գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, կենդանիների շուկաներում և տոնավաճառներում (վերնիսաժներում):

Օրենքի նշված պահանջներն ակնհայտորեն վկայում են, որ գյուղատնտեսական արտադրանքի, այդ թվում՝ մրգերի և բանջարեղենի վաճառքը կարող է իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպված առևտրի օբյեկտներում (խանութներ, կրպակներ, տաղավարներ) և առևտրի իրականացման վայրերում (գյուղատնտեսական արտադրանքի շուկա, առևտրի կենտրոններ):

Ներկայացված օրենսդրական նախաձեռնությամբ ըստ էության առաջարկվում է մրգերի և բանջարեղենի բացօթյա վաճառքի իրականացում, ինչը հակասում է «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սկզբունքներին և պահանջներին:

Ներկայացված օրենքի նախագիծը չի բխում բնակչության առողջության պահպանման շահերից, հակասում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա հաստատված սանիտարական կանոնների, նորմերի և հիգիենիկ նորմատիվների պահանջներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **նախագծի ընդունման դեպքում**

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա, քանի որ միրգը և բանջարեղենը չեն դասվում հատկապես արագ փչացող սննդամթերքի շարքին, իսկ դրանց վաճառքի համար անհրաժեշտ չեն հատուկ պայմաններ: Օրենքի 5.1 հոդվածի 3-րդ մասում նշված պահանջները բավարար են դրանց պահպանման և իրացման համար:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները առնչվում են մրգի և բանջարեղենի շուկաների հետ և նախագծով նախատեսվում է մրգի և բանջարեղենի բացօթյա առևտրի նկատմամբ սահմանափակման վերացում:

Ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլում առանցքային ուղղություններով կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է՝

Նախագծի ընդունմամբ առաջանում է միմյանց հետ մրցելու մատակարարների շարժառիթների սահմանափակման հնարավորություն, քանի որ մրգի և բանջարեղենի բացօթյա առևտրի պարագայում սպառողների համար բարձրանում է առկա մատակարարին փոխելու և մեկ այլ մատակարարից գնումներ կատարելու հնարավորությունը՝ հաշվի առնելով, որ բացօթյա առևտրի սուբյեկտները ունեն առավել ցածր գին առաջարկելու հնարավորություն, բացի դրանից սպառողին առավել մոտ գտնվելու առումով դրսևորում են ճկունություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա զգալի բացասական ազդեցություն հայտնաբերվելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում ***Էական*** ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. Կարգավորման ենթակա հարաբերությունները չեն ազդում «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչների վրա:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն: Օրենքի նախագծի ընդունմամբ վերացվում է մրգի և բանջարեղենի բացօթյա առևտրի նկատմամբ առկա սահմանափակումը, ընդլայնվում են բացօթյա առևտրի շրջանակները

Եզրակացություն

<<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի՝ (այսուհետ՝ Նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագիծը սոցիալական պաշտպանության ոլորտում ունի չեզոք ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է մրգի եւ բանջարեղենի բացօթյա առեւտրի թույլտվությունների տրամադրում:

Հաշվի առնելով, որ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի «ա» ենթակետով բացօթյա առեւտուր կազմակերպելու թույլտվության համար սահմանված է տեղական տուրք՝ յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ, ներկայացված նախագծի ընդունման դեպքում տեղի կունենա տեղական բյուջեների եկամուտների ավելացում:

Միաժամանակ հաշվի առնելով, որ բացակայում են մրգի եւ բանջարեղենի բացօթյա առեւտուր իրականացնողների թվաքանակները, ներկայացված նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատում հնարավոր կլինի իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի նիստի թիվ 42 արձանագրային որոշման 11-րդ կետով հաստատված տեղեկանքի առկայության պայմաններում

(մասնավորապես, վերոնշյալ գործունեության տեսակների մասին վիճակագրական տվյալների առկայության պայմաններում):

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում: Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Նախագիծ
Պ-1116-06.04.2011-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ ՀՕ-134-Ն օրենքի /այսուհետ՝ օրենք/ 5.1-րդ հոդվածի 2-րդ կետում «տնկիներ» բառից հետո լրացնել «միրգ, բանջարեղեն» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ

Օրինագծի ընդունումը պայմանավորված է բացօթյա առեւտրի շրջանակներն ընդլայնելու անհրաժեշտությամբ: